Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

քաղ. Երեւան 03 փետրվարի 2009թ.

Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի 2-րդ դատական կազմը նախագահությամբ՝ Հ.Նազարյանի, անդամակցությամբ՝ Հ.Դանիելյանի եւ Ռ.Պապայանի, քննության առնելով ՀՀ քաղաքացի Ռուբեն Թորոսյանի կողմից ներկայացված դիմումի ընդունելիության հարցը

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Քաղ. Ռուբեն Թորոսյանը 2009թ. հունվարի 16-ին (մտից թիվ 4-8) դիմել է Սահմանադրական դատարան՝ վիճարկելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69 հոդվածի 8-րդ մասի առաջին նախադասությամբ սահմանված դրույթի սահմանադրականությունը:

Դիմողը միջնորդել է վերոհիշյալ դիմումի ընդունման հարցը քննելիս հիմք ընդունել «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22 հոդվածի «ժդ» կետի դրույթները եւ ազատել իրեն պետական տուրք վճարելու պարտականությունից:

2. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 27 հոդվածի 3-րդ մասի համաձայն այդ օրենքի 69 հոդվածում նշված գործերով դիմողը պարտավոր է սահմանադրական դատարան ներկայացնել նաեւ օրենքով սահմանված չափով պետական տուրք (բազային պետական տուրքի հնգապատիկի չափով) վճարելու վերաբերյալ անդորրագիր կամ միջնորդություն՝ պետական տուրքի վճարումից ազատելու մասին: Տվյալ դեպքում դիմողը պետական տուրք վճարելու՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի վերոհիշյալ 27 հոդվածի 3-րդ մասում նախատեսված իր պարտականությունը չկատարելը փաստարկում է «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22 հոդվածի «ժդ» կետում նախատեսված արտոնությամբ:

3. Դատարաններում պետական տուրքի վճարման արտոնությունները սահմանված են «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22 հոդվածում, որի «ժդ» կետը, ինչը վկայակոչում է դիմումատուն, նախատեսում է դատարաններում պետական տուրքի վճարումից ազատում՝ <u>ընտրելու եւ (կամ) ընտրվելու իրավունքների խախտման վերաբերյալ դիմումներով</u>:

Սահմանադրական դատարան հասցեագրած իր դիմումով քաղ. Ռ.Թորոսյանը բարձրացնում է <u>օրենքի դրույթի սահմանադրականության հարց</u> (ՀՀ Սահմանադրության 101 հոդվածի 6-րդ կետ) որպիսի գործերով «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22 հոդվածի հիմքով պետական տուրքի վճարումից ազատում նախատեսված չէ:

4. Սահմանադրական դատարանի 2-րդ դատական կազմը հարկ է համարում նշել, որ անձի իրավունքների, ազատությունների դատական եւ մասնավորապես՝

սահմանադրական-դատական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքի (ՀՀ Սահմ.18 հոդված) իրացումն ենթադրում է ոչ միայն իրավունքների (նյութական, դատավարական) այլեւ՝ պարտականությունների անշեղ կատարում, որը նաեւ երաշխիք է դատական կարգով անձի իրավունքների արդյունավետ պաշտպանությունն ապահովելու համար: Պետական տուրքի ինստիտուտի օրենսդրական ներդրումը սահմանադրական-արդարադատական պրակտիկայում (2006թ. հուլիսի 1-ից) կոչված է ոչ թե անձին ծանրաբեռնել ձեւական պահանջով, այլ բարձրացնել նրա պատասխանատվությունը անհատական դիմումներով օրենքի դրույթի սահմանադրականությունը վիճարկելիս՝ միաժամանակ բացառելով դատարանն անհիմն դիմումներով ծանրաբեռնելու հնարավորությունը, ինչը վկայում է նաեւ միջազգային պրակտիկան: Տվյալ դեպքում, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69 հոդվածի 8-րդ մասի առաջին նախադասությամբ սահմանված դրույթի սահմանադրականության հարցով քաղ. Ռ.Թորոսյանի մեկ այլ դիմումով (ներկայացված՝ 2008թ. դեկտեմբերի 8-ին, մտիկ թիվ 4-247) սահմանադրական դատարանն արդեն իսկ քննության է ընդունել գործ, որի դատաքննությունը նշանակված է 2009թ. մարտի 17-ին, հետեւաբար «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69 հոդվածի 8-րդ մասի առաջին նախադասությամբ սահմանված դրույթի սահմանադրականության վիճարկման հարցով քաղ. Ռ.Թորոսյանի կողմից կրկնակի դիմում ներկայացնելու արդարացի հիմքեր չկան եւ իր կողմից վիճարկվող նորմի («Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69 հոդվածի 8-րդ մասի առաջին նախադասություն) սահմանադրականության վերաբերյալ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքով, դատարանի կանոնակարգով սահմանված կարգով բերվող փաստարկները (հիմնավորումները), միջնորդությունները կարող են քննության առնվել արդեն իսկ քննության ընդունված գործի շրջանակներում:

5. Ելնելով վերոշարադրյալից, ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 27, 29 եւ 69 հոդվածներով, սահմանադրական դատարանի կանոնակարգի 26 հոդվածի 3-րդ մասով, ՀՀ ՍԴ 2-րդ դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց

Չբավարարել պետական տուրք վճարելուց ազատելու վերաբերյալ քաղաքացի Ռուբեն Թորոսյանի միջնորդությունը եւ նրա դիմումի քննության ընդունումը մերժել:

Նախագահող՝ Հ.Նազարյան

Անդամներ՝ Հ.Դանիելյան

Ռ.Պապայան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՐՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ԵՐԵՎԱՆ